

Գ Ա Յ Մ Ա Ն Ք

Էրիզան 15 օրը անգամ մը կը
հրատարակուի :
Տարեկան գինն է 10 ֆրանք
Մէկ թերթը 2 զուրուշ .
Քաժանորդագրութիւնը տար-
ւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ճամբու
ծախքը առնողից վրայ է :
Անվճար նամակը կը մերժուի .
Հանդիսիս վերաբերեալ նա-
մակ կամ զրուծիւն, պէտք է
ուղղել առ Խմբագիր :



ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Կ. Պօլիս, Արամեան տպարան .
Ատաբազար, Պ. Սայաճորեան .
Տրապիզոն, Հ. Գ. Սարրեան .
Էրիզա, Պ. Սիմօն Մ. Խաչա-
տուրեան .
Երկոսիզա, Մ. Յ. Նազարէ-
նեան .
Զմիւռնիա, Յ. Տէտեան .
Կարին, Կ Պատ. Զաքարեան .
Վան, Պ. Գրիգոր Իսահեան .
Հալէպ, Երկ. Տ. Մարգարեան .
Ատանա, Մինաս Մկրտչեան .

Է Ր Ի Զ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երկ կ'ուզես գիտնալ քե աշխարհիս ազգաց մեջե՛ն հրն է ամենեկն լու-
սաւորեալն ու հաւուսը . հարցու՛ր քե հր ազգն արեւի շնքերցաւոր
կամ հր ազգն արեւի բուռք կը գործածէ :

Թիւ 1 Յունվար 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր Տարի . — Յառաջարան — Հայկական նամականի .
— Փուխջ :

1868

ՆՈՐ ՏԱՐԻ ՆՈՐ ԹՈՒԱԿԱՆ

Ե Ի

ՆՈՐ ՀԱՆԴԷՍ

Ա՛հ կատարեցաւ հին տարիին շրջանը . խրեցան
անոր անիւները . Թռաւ ու առջի տարիներուն կար-
գը մտաւ , տօթաւ իրեն հետ նաեւ մահկանացուաց
վաղանցիկ կեանքէն մաս մ'ալ . Թաղեց նաեւ իրեն
հետ կերպ կերպ դառնութեանց ու վշտաց խումբ
մ'ալ , կնքեց իւր կեանքին հետ մարդկային զարմէն
շատերուն կեանքն ալ :

Ահա անոր յաջորդեց դարձեալ մէկ նոր տարի մը

դարձեալ եկան հասան ուրախութեան ու բերկրա-
նաց օրերը . դարձեալ ԿԱՂԱՆԴ մ'ալ հասաւ . այս
ուրախալից ձայնը ամէն կողմանէ օդը կը թնտացը-
նէ , մեծ ու պզտիկ ՇԵՈՇՀՍԻՈՐ ՆՈՐ ՏՄԱՐԻ
ըսելով իրարու կը վազեն , տուները ու ճամբաները
գիրար շնորհաւորելու միմնչիւններով կը լեցուին ,
զոր ամէն մարդ իւր բարեկամին , սրտակիցն իւր
սրտակցին , սիրահարն իւր սիրուհւոյն . . . ուրախ
սրտիւ և պայծառ դիմօք ձեռք ձեռքի տալով նոր
տարուան զալուստը կը բարեկեն : Երջանիկ օրեր
և ամէն կերպ յաջողութիւն ու անդորրութիւն կը
մաղթեն մէկ մէկու համար , աղա՛թ ու երիտասարդք
կը ցատկեն ու կը ծիծաղին , յետին աստիճանի ծե-
րերն անգամ այն օրը կը ճարպիկնան , հիւանդներն
անգամ նոր ոգի նոր աշխոյժ կ'զգան , մէկ խօսքով
ամէն հասակի տէր մարդիկ իրարու նոր տարւոյն
զալուստը կը մաղթեն , ու անոր համար կը խնդաին .
ամէն կողմ ասոր համար իրար անցում կ'ելլէ , ու-
րիշ բան մը չ'ըսուիր , քայց միայն տարիին նորոգ-

ուելուն վրայ միահաւասար և չափազանց խընդում մը :

Սիրելի բարեկամներս , զիտէք արդեօք թէ չկայ անանկ մէկը՝ որ իր խնդումը քիչ մը մէկդի թողլով , անցեալին տխուր հետքը դիտէ , ու իր մտաց կըշռովը սրածուրի տարւոյն մէջ ձեռք բերածը լաւ մը կշռէ : Իմաստունը տարւոյն շրջանին շուտ շուտ դառնալը տեսնելով չինդար , հապա անցեալին մէջ իւր շահն ու վնասը հաշուելու կը նստի :

Մեր զուարթ մանկութեան ծաղիկները թօռմեցան , ահա երիտասարդութեան տարիքներնուս մէկն ալ թռաւ զնաց , ու այսպէս հետզհետէ պիտի անհետանան , բայց արդեօք մեր այս կարճատև ժամանակինս ամէն մէկ վայրկեաններնուն հետ առաքինութեան գովելի գործքի մը մէյմէկ քաղցր յիշատակներ կրնանք թողուլ , արդեօք անցելոյն վրայ ցաւելով եկածին յարգը կրնանք ճանչնալ :

Այսօր Կաղանդ , վաղը Ծնունդ , մէկալ օր Չատիկ է ըսելով կը պարենք ու կը խնդանք , բայց անոնք ալ կանցնին , կանցնի այն տարին ուրիշ մ'ալ կուգայ , և մենք միշտ կուրախանանք , չենք գիտեր որ ամէն մէկ տարին յաջորդելուն դէպ ի գերեզման կը մօտենանք , չենք գիտեր որ ժամանակին անիւներուն շուտ դառնալովը մենք ալ մահուան կը հասնինք . ամէն հասակի տէր մարդիկ չեն մտածեր ասիկայ , չենք խորհիր երբէք մեր ունեցած պարտաւորութիւններնուս վրայ , անոնք ժամ մը առաջ կատարելու համար ալ բնաւ հոգերնիս չըլլար , օր օրի ու տարուէ տարի կը ձգենք , զալ տարի անշուշտ կընենք կըսենք ու տարին կուգայ կանցնի կերծայ . ու մենք դեռ պարտքերնիս չենք կատարեր :

Եղբայրք ասանկով տարիները կանցնին և ամէն մէկ ժամ իրեն քաղցր ու ազդու ձայնովը հրաժեշտնին տալով՝ իմացնել կուզեն մեզ որ մէյմէկ առաքինութիւն ու բարի գործ իրենց հետ թողունք կամ թէ մեր պարտաւորութիւննիս կատարելու չմոռնանք , ինչու որ ներկան ոչինչը անցունելովնիս ապագային մէջ անանկ ատեն կըլլայ որ միջոց չենք կրնար գտնել զանոնք կատարելու , անանկ ժամ մը կուգայ որ ոչ մէկը գիտէ բայց միայն Հայր Աստուած :

Եղբայրք պարտաւորութիւն ըսելովնիս կը հասկընանք մէկ մը առ ճշմարիտ Արարիչն , որ ասիկայ մեր առաջին գործքն է աշխարհիս վրայ . այս է մեր առաջին պարտքը զոր Աստուած մեզմէ կը պահանջէ առանց պատճառի , և մենք ալ անշուշտ պիտի կատարեմք թէ որ զանի կը սիրեմք , մեր հոգևոր պարտքն է որ զինքը սիրեմք ամէն բանէն աւելի . հնազանդինք անոր , պահենք անոր ըսածները :

Օր օրի նորէ նոր առաքինութիւններ գործելու ետևէ ըլլամք : Ահա ասոնք ենմեր Հոգևոր պարտաւորութիւններն , որ անշուշտ կատարելու ենք , քանի որ ձեռքերնիս ժամանակ ունինք : Մէկ մ'ալ պարտաւորութիւն առ սիրելի Ազգ , մարդուս երկրորդ պարտքն ալ ասիկայ է՝ որ իւր Ազգին ունի . ամէն մէկ մարդ իր հոգևոր պարտաւորութենէն ետև ապիկայ ալ պիտի ընէ :

Մեր պարտքն է սիրել մեր ազգը , ասով ազգասէր ըլլալ , ազգերնուս յառաջադիմութեան համար բան մը չը խնայել , մէկ խօսքով ամեն կողմանէ օգնել անոր : Ո՛հ ինչ գեղեցիկ պարտաւորութիւն մ'է ասիկայ :

Եղբայրք , մեր այս երկրորդ պարտքը , ճիշդ առաջինին նմանն է , ինչու որ եթէ այնպահենք , ասիկայ ալ պահած կըլլամք , յիշեցէք սիրելիք : Ամենակարողին Մովսէսի տուած տասնաբանեայ պատուիրանին մէջի այն մեծ պարտքը՝ որ մեր վրայ դրաւ . «ընկերնիս մեզ նման սիրելու համար» մենք որ հիմայ մէկ Ազգէ և միւսնոյն արիւնէ ենք . ըսելէ որ իրարու ընկեր ու եղբայր ենք . անձերնուս պէս պէտք է որ զիրար սիրենք . և այս սիրոյ հետ ալ իրարու պիտի օգնենք :

Հայեր ահաւասիկ սահեցաւ 1867 թուականը . ուրեմն մենք ալ թողունք սահելու , մեր մէջ եղած եղբայրսդաւ զժողովներն , ուխտեմք այս օրէն տեղի չտալ այնպիսի անվայել երկպառակութեանց , որոնք որ մեր միութեան ոսկեգօծ սիւնը կործանելէ ի զատ ուրիշ արդիւնք մը չունին . ոտք կոխենք նոր տարւոյս մէջ՝ նոր ոգով , մերկանամք եթէ ունիմք մեր սրտերու մէջ ատելութեան և թշնամութեան դառն կսկիծը և բարեմաղծեմք 1868 թուա-


կանը որով մեր Ազգին չունաւորութեան ու յառաջադիմութեանը առաջնորդն ըլլալ՝ ինչպէս որ բնութիւնը ձմրան վախճան, ու գեղածիծաղ զարնան մերձաւորութիւնը կ'աւետէ մեզ, նոյնպէս ալ թող անհետանայ բոլորովին մեր խռովութեան մահաբեր ձմեռը, ու հալին մեր յառաջադիմութեան դէմ կանգնող ատելութեան ձիւնապատ լեռները. անկեղծ և խաղաղասէր հաշտութեան կենդանարար արեգական ծագմամբ՝ թող իյնան կործանին այսուհետև դժոխային սանդարամետները:

Հայեր սիրոյ համբոյրներով զրկենք զիրար մեր անմիաբանութեան երեսն կրած անհամար թշուառութիւններն ու չարիքներն բաւական սեպելով. դառնանք զոչեմք միաբան « Եղբայր եմք մեք » միաբանիմք սիրով, ջանամք Հայութիւնը բարձրացունելու, տեսնեն մեր թշնամիք, տրտմին ու գետնհար ըլլան, տեսնեն բարեկամք զմայլին և ուրախանան:

Ամէն մէկ բարեաց մայրը միաբանութիւնն է, իսկ ամէն մէկ չարեաց ծնողն ալ անմիաբանութիւնն է. ուրեմն ասիկալ գիտնալովնիս, միաբանութիւն ունենամք մէջերնիս. գիտնանք որ եթէ վայրկեան մը միաբանութեան սահմանէն դուրս ցատկենք, չենք կրնար յաջողութիւն մը գտնալ, միաբանութիւնը ձեռքերնուս մէջ, իբր մէկ վահանմը ունենամք. անմիաբանութեան չարագրգիռ զէնքին դէմ ելնելու:

Հայեր յարգենք խաղաղութիւնը և ազատութեան սիրահարը ըլլանք. նոր տարւոյս հետ մենք ալ նոր ոգի միաբանութեան զգենումք, ելնենք տգիտութեան խոր քունէն, թոժուենք մեր վրայէն անմիաբանութեան փոշին՝ առաւել կոխելով աքսորենք մեր մէջէն ծպտեալ վասակները, և փութաջան աշխատիմք մեր Ազգին յառաջադիմութեանը, որ փառք և պարծանք է մեզ. անկեղծ սիրով բռնենք իրարու ձեռքէ, և ազգասիրաբար ի գործ դնենք այն ամէն ջանքերն որ պէտք ունին Հայութեան օգտին ու կենդանութեանը, և որով պիտի կարենամք սիրելի ըլլալ լուսաւորեալ ազգաց և արժանալ անոնց սիրոյն ու համարմանը:

Վերջապէս ահա այսօր մեք ևս հասարակաց ուրախութեան զգակից ըլլալով, նոր բերկրութեամբ պատիւ կը համարիմք մեր նորնծայ Էրիզայի միջոցաւ բոլոր Հայութիւնը բարեւել շնորհաւոր նոր տարի, և 1868 թուական աւետելով, և առանձինն մեզ իրենց լրացրաց ցանկին մէջ պատուող ազգային Մեծապատիւ խմբագրաց և մեր ուսումնասէր բաժանորդաց, նոր տարւոյս սկզբնաւորութիւնն մաղթել իւրաքանչիւրոց համար երկնի ամէ կերպ ուղղուած երջանկութիւնն ու ուրախութիւնը: Եւ այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնն մատուցանել ամէն անոնց որ ազգասիրաբար չպիտի զլանան իրենց ձեռնտուութիւնն ու քաջալերութիւնը հանդիսիս շարունակութեանը համար: Միշտ անմեղադիր և ներողամիտ գտնուելով ունեցած թերութեանցն: Որով ահա այսօր իւր առաջին շրջանը սկսելու արժանացած կը խոստանայ օրէ օր ուղղել իւր թերութիւններէն և օգտակար նիւթոց մատակարարութեամբ ընթերցասէր ազգայնոց առաւել համակրութեանն ու սիրոյն արժանանալ, և մասն ինչ հանգանակութիւն ունենալ ամենասիրելի Ազգիս թորգոմեանց ցանկալի յառաջադիմութեանն համար եղած անդու ջանից և քրտանց մէջ, որ նուիրական և սրբազան պարտք մնէ Ազգասէր և ճշմարտասէր Հայու մը և որ անհոգ և անաշխատ գտնուողն օտարամոլ է և մարդկութեան սահմանէն դուրս:



ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌ ԸՆԹԵՐՑԱՍԷՐ ԵՂԲԱՐՍ

Ահաւասիկ այսօր ծագեցաւ մեզ այն երջանիկ օրը, կամ լաւ ևս է ըսել՝ այն բարեպատեհ առիթը, որով ամենայն վստահութեամբ կը ներկայանանք Նոր Տարւոյս հետ գրականական հանդիսարանին մէջ. ուր տեղ փափաքելի էր մեզ կանուխ ժամանակաւ երևել և ազգասէր ընթերցասիրաց իղձն ու փաճանքը լեցնելու՝ ջանասէր ըլլալ:

Ուրեմն ինչ էր այն պատճառը՝ որ այսչափ զմեզ մեր նպատակէն կը հեռացնէր. կը յուսամ որ ողջախոհ ազգայինք քաջ գիտեն որ նպատակ մը որ-

չափ որ սիրելի ըլլայ, նոյնչափ ալ իւր խոչընդոտները կը բազմապատուի. արհաւիրակ ասանկ ալ մեր բարի նպատակը. սակայն այսօր քաջ համոզուելով որ ընթերցածսէր Ազգայնոց սիրայորդոր ջանքը մեր աշխատութեան հետ միանալով՝ ամենազրժուարիները անգամ կը գիրանալ. ուստի մենք ալ ամենայն վստահութեամբ՝ Ազգայնոց ջանքին պարտաւորելով՝ կը խոստանամք հետզհետեւ օգտաւէտ ծառայութիւններ Կտ չձգել Հայ ընթերցանութեան համար Ազգային, Մշտողական, Ուսումնական, Բարոյական, Կայլն, նիւթոց մատակարարութեամբ:

Գրականութեան այս ընդարձակ ասպարէզին մէջ առաջին անգամ ի տես ելնողներէ շատերը ինքզինքնին իբր երեւելի գրագէտ Վոլոժեռի կամ Վիքթոր Հիւկոյի կերպարանքն, սիրտն ու ոգին առած կը կարծեն. սակայն ես նոյն դիրքին մէջ չեմ. վասն զի ուսումնասէր Ազգայինք քաջ գիտեն որ գրականական և ուսման ասպարէզը՝ երկրիս ընդարձակ դաշտերուն նմանութիւնը կը զերազանցէ և որով անկարելի է մարդս կարճատև ժամու մը մէջ այս անհուն ճանապարհը ի գլուխ հանելու նախանձախնդիր ըլլալ:

Էրիզայիս սկզբնաւորութեան այս առաջին թիւը կարգացող Ազգայինք՝ քաջ գիտեմ որ շատերը զիս չեն ճանաչեր. վասն զի դեռ երիտասարդ և դեռ Արքունի բժշկական դպրոցի աշակերտութեան պաշտօնին մէջ կը գտնուիմ. և այս առաջին անգամն է որ գրականութեան ասպարէզին մէջ քայլ մը առնելու կը տքնիմ:

Գրականութեան ասպարէզը ընդարձակ է ըսինք. վասն զի գրականաց շատերը դեռ այս լայնածաւալ և անհուն ասպարէզին մէջ, հազիւ թէ յառաջդիմութեան քայլ մը առած, վարդի թուփի նման գունափոխ ըլլալով կեանքերնին մահուան ձեռքը մատնած կըսկսին գերեզմանի մը խոր անկիւնները խորատուղիլ ու անհետանալ:

Ուրեմն ինչպէս կարող կըլլայ մարդս, գրականական այս ընդարձակ դաշտին մէջ. ինքզինքը քաջ գրագէտ մը սեպել ու պարծենալ, ես չեմ կարող

պարծիլ. քայց միայն թէ՛ սովորածս և այսուհետև սովորելիքներս՝ կ'ստիպուիմ Հայութեան ներկայացներ, որպէս զի ազնիւ Ազգայինք ստիպուին իրենց սիրելի զաւակները երեւելի ուսմանց ծառայեցնելու ջանասէր Ըլլաք Այո՛, ես չեմ կարող պարծիլ և չեմ կարող ինքզինքս քաջ գրագէտ մը սեպել:

Սիրելի բարեկամք, գրականութեան ասպարէզը ընդարձակ է, ըսինք. իսկ եթէ նեղ ալ ըլլայ, կրնային կը համարձակիմ ըսել թէ Հայ մանկտոյն հարկերին հինգը հազիւ ուսման և գրականութեան զբաղած է. անջնջելի ճշմարտութիւն. եթէ կուզեն ընթերցողը կրնան անգամ մը ազգերնու մէջ գտնուած դպրոցները աչքէ անցունել թէ կան արդեօք այնպիսի ուսմունք մը՝ որ ներկային մէջ յառաջդիմութեան քայլ մը առնելու կարող ըլլայ. ահ. . . հչ վասն զի Ազգայնոց շատերը դեռ տգիտութեան ռամկութեան և նախապաշարման անուելի անկողնոյն մէջ խոր քուն մը կը քաշեն. աւելի աղէկ ևս ըսեմ, բարձր ուսմունքներ կարդալը մեղք սեպելէ ի զատ՝ հատարակ ընթերցմունքը անգամ անհաւատութիւն կը համարեն. . . Խղճալի վիճակ եւ ողորմելի կեանք:

Մեր այսօրուան նպատակը ուրիշ բան չէ. այլ Էրիզայիս միջոցաւ Հայ մանկտոյն փոքր ինչ ծառայութիւն մը ընել. . . Աստուած ամենակարող երկնի և երկրի արարիչը մարդուս կարողութիւն մը պարգեւած է, որ տիեզերքիս մէջ եղած բաները բննելով զինքը անոնց ճշմարիտ արարիչը ու պատճառը ճանչնայ. սիրէ ու պաշտէ, և որչափ որ մարդը այս կարողութիւնս կը գործածէ այնչափ ալ աւելի գիտութեամբ լուսաւորուելով Աստուծոյ մեծութիւնը կը ճանչնայ. որչափ աւելի ևս Աստուած կը փառաւորի և մեծամեծ բարիք յառաջ կուզան. թէ որ այս հաւատոյ հետ գիտութիւնն ալ միանայ:

Մարդու մը համար ամէն գիտութիւն օգտակար է, սակայն թէ որ Բնական գիտութիւնը, Քիմիաբանութիւնը, Առողջաբանութիւնը, Կայլն, Կայլն, աւելի օգտակար է ըսելու ըլլամք կարծեմ որ սխալութիւն մը ըրած չեմք ըլլաք: Առաջինով և երկրորդով քիչ ժամանակի մէջ այնպիսի օգտաւէտ գիտեր

հնարուեցանու ետևէն ալ կը ճնարուին։ Բարձր ուսմամբ մարդիկ կը լուսաւորուին ու կը ճարտաւան, ատենք այնպիսի գիտութիւններ են՝ որ մարդուս մտքէն չանցած զիւտերը կը հնարէ, և օգուտն ամէնուն առ հանաքակ վայելել և օրէ օր նորանոր բաներ գտնելով առիթ կուտայ։ Ինչպէս որ այս վերջին տարիներէս մէջ այնչափ նորանոր գիտեր հնարուեցան որ մարդս կը կարծէ թէ մարդկային միտքը ասոնցմէ աւելի ուրիշ բան մը չը կրնար մը տաժել ու հնարել։ Անտարակոյս՝ մեզմէ առաջիներն ալ այնպէս կը մտածէին, նաև մեզմէ վերջը եկողներն ալ նոյնը պիտի մտածեն։

Բայց եթէ քիչ մը խորունկ լինելու ելնեմք վերջին տարիներուս մէջ յառաջ եկած շահաւոր գիտերը որոնք որ նախնիք չէին կրնար երևակայել, ուստի հիմայ ալ կրնանք ըսել որ այսուհետև այնպիսի բաներ կրնան հնարուիլ որուն վրայ դեռ մենք ամենևին թեթև գաղափար մը անգամ չունինք եւ ստուգիւ քանի մը տարի առաջ ո՛վ կարող էր մտքէն անցունել թէ՛ մէկ քանի վայրկեանի մէջ լուսոյ ազդեցութեամբ պատկերներ նկարուիլ, որ արհեստաւոր մը բաւական աշխատութեամբ հազիւ թէ շատ ժամանակի մէջ յառաջ կը բերեր։ Ո՞վ կարող էր մտածել թէ հասարակ ընթացքով շատ օրերու մէջ եղած ճամբան շոգոյ միջնորդութեամբ քիչ ժամանակուան մէջ կարող կրնամք ընել։ Արդեօք ո՞վ կարող էր մտածել թէ հեռագրական թելով մը, Արեւելքէն Արեւմուտք, Հարաւէն Հիւսիս քանի մը վայրկեանի մէջ լուրեր կը հաղորդուին, որն որ քանի մը տարի առաջ մարդիկ անտանելի աշխատութիւններ կը կրէին։

Ո՞վ և ոչ մէկը, սակայն այսօր գիտութիւնն ոգ ուսմունքը մարդկային ընկերութեան այնպիսի զօրութիւն մը կուտայ՝ որ աշխատութեամբ ամենագիտարիները անգամ կը դիւրանայ։

Սիրելի բարեկամք, չըսենք թէ՛ ահաւասիկ ամէն բան հնարուեր ու լմացեր է. և մէկի համար ալ հրնարելու բան մը չէ մնացեր։ Ոչ՝ բարեկամք, կը պիտիմք. պէտք չէ որ մարդկային այս գիտերը կարդանք ու զուարճանանք տեսնենք ու հանդիսա-

տես ըլլանք։ այլ պէտք է Արարչին մեզ պարգևած կարողութիւնը գործածելով, Ազգերուս պայծառութեան և մեր երջանկութեան համար աշխատինք. նոր գիտեր գտնելու մեր և մեր սիրելի Ազգին պատիւը բոլոր լուսաւորեալ յագագ պատուոյն ցանկին մէջ տեղ մը զետեղելու։

Յաւալի է մեզ, բարեկամք, Եւրոպացոյն նորանոր յառաջադիմութիւնները հաշուելով մեծամեծ հնարքներ և գիտեր տեսնել։ Իսկ մեր Ազգին յետադիմութեան չար արգասիքը հաշուելով տգիտութեան երեսէ կրած անհամար խեղճութենէն ի զատ ուրիշ բան մը չը տեսնել։ Արդեօք ինչ տարբերութեամբ ստեղծուած է Եւրոպացին Ասիացիէն. ո՞չ ինչ։ Ուրեմն ինչ է անոնց այսչափ յառաջադիմութիւնը և մեր այս յետադիմութիւնը... Եթէ ոչ տգիտութեան մը անհաշտ արգասիքը։

Ինչպէս որ քիչ մը վերը յիշեցինք բնական և քիմիական գիտութիւնները արհեստները խոյսչափ կը ծաղկեցնեն։ Նոյնպէս ալ առողջաբանութիւնը մարդուս կատարեալ կենդանութիւնը ծաղկեցնելու և Արարչին զեղեցիկ պատկերը կրողներու կեանքը վտանգներէ և հիւանդութիւններէ հեռի պահելու կը ծառայէ։ Ինչպէս որ մեր սիրելի բարեկամ, Տ. Մանուէլ Էֆէնտի Իւթիւնեանը բազմաջան աշխատութեամբ իւր Կիլիկիա անուն ամսամթերոյժը Հայ մանկուոյն այս դաստիարակութեան ծառայելու ձանձրութեանը սիրով յանձնառու ըլլալով՝ մարդկային ընկերութեան ճշմարիտ բարեկամ կոչուած է. ան ուր է. Թէ Հայն ալ այնպիսի կենսաւետ թերթի մը յարգը ճանչնալով անոր յարատուութեանը համար մեծապատիւ խմբագրին քաջալերիչ խրախոյսներ կարդալէ չզաղրեր։

Ահաւասիկ այսօր ալ Էրիզա՞ն քաջ ճանչնալով առողջական թերթի մը անբաւական ըլլալը՝ կը խոստանայ հետզհետէ իւր թերթերով առողջաբանական շարունակութիւններ ընել։ և իւր գրկէն դուրս սլացող Հայ մանկուոյն առողջութիւնը պաշտպանել։ Վստահ եմ որ Ազգայինք իրենց հայրենի երկրին չնաշխարհիկ անունը կրող Էրիզա հանդէսը, ծոցերնին ընդունելով յարատուութեանը համար

լատամորդագրութիւննին մեզ չպիտի զլսնան .
և իրենց պարտքերնին ճանչնալով Հայ գրականու-
թիւնը պատուել պիտի բարեհաճին :

Հանդիսիս էջերն անխտիր ամէն ուսումնասէր
Հայու համարբաց է, միակ պայման մը՝ այն է անձ-
նական վէճերու և կամ ընդհանուրին օգտին վնասող,
կառավարութեանց և կրօնից դէմ յօդուածք և նա-
մակը անընդունելի են . սակայն սիրով պիտի ըն-
դունուի ընդհանրութեան օգտակար , ընդհանուրին
շահը կեանքն ու առողջութիւնը պաշտպանող յօդ-
ուածք . նաեւ տրամախօսական և սիրահարական
նամակք :

Վստահ եմ որ Ազգային մեծարգոյ հմբադիրք պիտի
բարեհաճին ծանուցանել Հասարակութեան Էրիզայիս
այս առաջին սկզբնաւորութիւնն ու պատուեն զիս
հանդիսիս հետ փոխանակելով իրենց պատուական
օրագիրները , զորս պէտք է ուղղել Արքունի բժշ-
կական դպրոցն ի Կիւլ-հանէ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՆԻ

Երիզա 10 Դեկտ. 1867

Ազնիւ Բարեկամ

Հայկական աշխարհի կեդրոնը նստած ու Ազգային
անցքերու վրայ , Զաքարիական լռութիւն մը պահե-
լըս , յիշաւի մեր կենաց յաջորդող գարնան կանանչա-
գեղ մարգագետնի անուշաբոյր ծաղիկներու մէջ՝
իբր փշալից անտառիկ մը պիտի ձեւանայ , եւ նոյն
իսկ Հայկական աշխարհի բարեկամներու ցաւալի՝ ու
հետադիմութեան անհաշտ թշնամույն բերկրառիթ-
տեսարան մը պիտի ներկայացնէ : Ա՛հ ու սարսափ
մը պիտի ազդէ ազգասիրի սրտին եւ բարեպատեհ
առիթ մը սեպուի օտարասիրի ձեռքի ներքեւ : Ան-
շուշտ մեղադրելի է բարեկամ , եւ այս կողմի հասա-
րակութեան վրայ ծանրացած տգիտական հոռուացու-
թիւնները լսելէ դեռ քիչ իրաւունք ունիս սիրուն կեր-
պով մը զիս յանդիմանելու եւ հարցունելու « Ինչո՞ւ
համար լեզուդ կապեր ու նստեր ես » քանի
որ կը կարծես թէ բերնիս շարժումն ու լեզուիս
թոթովումը , զոր դու խօսիլ կանուանես , կրնայ
մեր համազգի եղբարց օգտակար ըլլալ : Ուրեմն ես

ալ սկսիմ այսուհետեւ լեզուիս կապը քակել լռութեա-
նըս վերջ մը տալ , ու թոթովել :

Ա՛հ , ուր ես բարեկամ , եւ ի՞նչ եղաւ սիրելի ու
չնաշխարհիկ երկրի մը անունը կրող Էրիզան զորս
ձեր խոստմանը համեմատ՝ դեռ ոչ ձայնը լսուեցաւ
եւ ոչ ալ նոյն ինքն ի տես ելաւ . այս տեղ գաղտ-
նի զօրութիւն մը ըլլալու է : Ինչ միթէ Էրիզան ալ ,
ինչպէս որ կը տեսնուի լուսինը ամպերու մէջ թաղ-
ուած , անկար ու անգոր , թերեւս ծնունդ չառած
ծերութեան անդունդը գլորեցաւ , Բ՛նչ միթէ Էրիզան
ալ Հայ գրականութեան անբերրի հողին վրայ անկիւն
մը չգտաւ հայրենեաց կոթող մը կանգնելու ,
բարեկամ մարդ մը որչափ հայրենասէր ըլլայ , կրկին
իւր հայրենիքը կը սիրէ : Ուր էր որ գիտնայիր թէ
ինչպէս կը բաբախէ սիրտս՝ երբ Էրիզա անունը ա-
կանջիս կը թափանցէ . Էրիզա ա՛հ այն մայրենի եր-
կիրը , ուր ատեն մը իւր գրկէն դուրս հայրենասէր
ախոյեաններ կը սլանային անմիաբանութեան դէմ ,
միաբանութիւն կը գօռային , բռնութեան դէմ ազա-
տութիւն կը գոչէին , խղճի ու մտքի դէմ կեցող
Յազկերտներն ու Վասակներն չղթայակալ կը նեղէին .
Հայաստանի խաղաղ կրօնին եւ բուն խաճ կեդրոնին
վրայ բռնացող օտարամոլներու կեանքը սրով մը կո-
չնչացնէին . սակայն այսօր Հայը այն սահմանէն չե-
ղած ու օտարամոլ ազգասէրներու ձեռքին տակ դերի
ըլլալով իր իրաւունքը բոլորովին կորուսած՝ եւ իբր
վհուկ անոնց ձեռքը տղայական գրօսանք մը եղած է :
Ա՛հ բարեկամ , դեռ չլամիտ Հայը , իւր Հայրենի
փառաց կորստեան վրայ ի խոր սրտէ հառաչանք մը
չքաշեր . եւ իբր անպտուղ խոտ կը ծլի ու իբր փոշի
օդը կը սրանայ . Հայսց մտաւորական նսեմ հորիզո-
նէն կայծակի պէս կը սահի կ'անցնի , ու սեւ ամպե-
րու մէջ դեռ ու դէն գլորելով գահալէժ կը սառառնի
կրնկնի : Ուր ո՛չ ոք գիտէ շլամիտութենէ կուրացեալ
կարճատես ձեւանալով իրեն ծնունդ տուող մօրը
խեղճութեանը վրայ ակնարկ մը չնետեր . կոյս
մը , մայր մը , որ Հայրենի փլատակ ու հիմ-
նակործան աւերակներու վրայ կանգուն . հաստաբա-
զուկ ձեռքը ճակտին դրած իւր աւերակաց վրայ կը
հառաջէլաց ու կոծ կըբառնայ , իւր հարազատ զաւակ-
ներէն օգնութիւն կը խնդրէ , սակայն չլամիտ Հայը
դեռ անտարբեր կը գտնուի . եւ վոյրկեան մը իսկ
աչքերը դէպի իւր սգալի մօրը վրայ չդարցուներ ...

Սրգարեւ բարեկամ , այսօր ներկայ տարիս չըջա

Նր փոխելով, իւր օրհասականը կարդաց, կարծեմ էրիզան ալ երկնի սեւադեմ հորիզոնէն դուրս սրանալով իբր լուսավառ աստղիկ Հայ գրականութեան ասպարէզին մէջ փայլեցաւ. անշուշտ իր կենսատու էջերը առաջ պօսեցւոյն աչքերուն հանդիպեցաւ, արդեօք ձմրան մրրկայոյզ ողբերուն հանդիպելով Հայրենիքը մոռցաւ. արդեօք չոգեանաւ թշնամի ալիքներուն ձեռք մատնուելով Հայրենի փողնքներէ հեռի՝ օտար քամիներու հանդիպեցաւ: Ահ, ո՞վ գիտէ (արդեօք որուն աստղիկը որուն բաղդն էր որ երկնի լուսաճաճանչ կամարին վրայէն սահելով մարը մտաւ) նոյնը կը կրկնեն բարեկամներդ եւ ակընդես կը դիտեն Հայրենեաց Եփրատ ու Տիգրիս սահուն գետերը. որպէս զի լուր մը առնեն ու գէթ սակաւ ինչ միտթարութիւն մը զգան. ահ էրիզան, Հայրենեաց արեւն, լլօսինն ու մոլորակն է. գոյնզգոյն անուշահոտ վարդերու նման վաղանցիկ կենօք մարելու սահմանուած չէ աշխարհիս մէջ, ինչպէս որ կանցնին եւ հող կը դառնան հոյակապ հիմարկութիւններն: Երիզան որչափ շարժումներ ու իրարանցումներ տեսեր, որչափ աւերակներու ու արիւնհեղութեանց մէջ մնացեր, եւ դարձեալ իր անունը իբր պարծանք հայրենեաց անորատ պահեր է. պատմութեան էջերուն ակնարկ մը նետող Հայը՝ քաջ կը ճանչնայ զինքը, ամէն կերպով իւր պարտքը կատարեր. վիշտ եւ դառնութիւն քաշելով հայրենի հողին վրայ սերմեր ձգեր է. ահ ասանկ ալ ամէն բան պարտի իւր շրջանը կատարել, պտղատու սերմ ձգել, ու այնպէս մեռնիլ:

Ահա այս է բնութեան օրէնքը: Նորածին սէր մը անմեղ սրտի մը մէջ սպաննելու, նոր ծլած բոյս մը բուռնէն կտրելու, նոր հարսն ու փեսան առագաստէն բռնի բաժնելու. ազատութեան համար ծնող ազգ մը գէրութեան տակ ճնշելու չափ ոճիր մ'է, արդար սկզբունքի՝ եւ ճշմարտութեան սազմը վիժել տալը:

Բայց այս օրէնքը պահողը ո՞վ է, կը հարցունես անշուշտ ինձի, ո՞վ արգիլեց Զմիւռնի Մաղիկը իր գարունը մտնելու եթէ ոչ բռնութեան սառն ձեռքը, բանասերկութեան մահաբոյր շունչը, տգիտութեան երկսայրի սուրը: Այո, գիտեմ Մաղիկի գաղարման շարժառիթը, բայց բարեկամ դու ալ քաջ գիտես որ ազատութեան վիթխարի թշնամիին մրցանակ մը

չնորհած լինելը՝ եթէ Մեծ. խմբագիրն կրկին իւր Մաղիկը Հայ գրականութեան անուշահոտ հոտեր տալու համար չտնկէ:

Ահ որչափ ամօթ եւ նախատինք է Հայ գրականութեան, որ անուշաբոյր Մաղիկը կսկսի թառամիլ ու ընկճիլ, եւ իր կենդանարար հոտը ալ մեզ չբուրել. որչափ ամօթ է Հայ ընթերցանութեան երբ Մաղիկի պէս արդարախօս եւ ազատախօս թերթ մը այսչափ բռնութեան անհաշտ թշնամիներու դառնաշունչ քամիներու, կատաղի եւ սաստկաշունչ ալիքներու յաղթելէ վերջը այսօր ինքնին կը պարտաւորի կանգ առնուլ, ու իր աղեկէզ դամբանականը անձամբ կարդալ ի խոր սգոյ մէջ թողնուլ ընթերցասէր եւ յառաջադիմութեան ճշմարիտ բարեկամները:

Ո՞վ դու շլամիտ Հայ. Բնչ, կուզէիր որ Մաղիկը տեսակ մը թերթերու պէս անոգի գլուխներու. ցուրտ եւ անզգոյն արեւուն ներքեւ շողմարարութեան եւ շահասիրութեան պղտոր ու մնայուն լճակի մը եզրը բուսներ եւ տատասկի պէս յարատեւ մնար. թէեւ անհամ ու անհոտ. Զէ, ես չեմ կարծեր: Արեւմտ շունչ առ Մաղիկ, նաեւ դու էրիզա. վերածնեցէք նոյն հաւատքով զոր արդարութիւնը կը ներշնչէ, երկուքդ ի միասին Հայկական աշխարհի դիմակաւոր ազգասիրին դիմակը վար առէք, մէկդ Հայրենի երկրին անունը կը կրէք, իսկ միւսդ անոր բուրաստանի հոտաւէտ ծաղիկն էք: Իսկ դու Երիզա՝ քիչ մը ծաղկի ազատութեան հով եւ պարտաւոր հող խոստացիր, որ ան ալ իր կենսատու մասերուն ուժ եւ հիւթ խոստանալով կազդուրի ու նորէն ծաղկի. եւ ինչպէս արեւագէտ ծաղիկը միշտ դէպի արեգական կը դառնայ, նայնպէս ալ Մաղիկն իւր անուշաբոյր հոտովը Երիզայիդ գիրկը հանգչող Հայկայ թոռները զովացնէ:

Ահ, բարեկամ, արդեօք ինչուան երբ Հայը դեռ այս մանկական քնոյն մէջ պիտի ննջէ, ինչուան երբ իր բարոյական եւ մտաւորական ճշմարիտ բարեկամները անյարգ պիտի թողու, ինչուան երբ տգիտութեան թշնամի եւ յառաջադիմութեան բարեկամ ձեւացող, սակայն դիմակաւոր վճուկներու առաջ ծաւեր պիտի դնէ. ինչուան երբ խաւարասէր ու մրրկայոյզ թշնամիներու ձեռքը սիրով պիտի համբուրէ, ու անոնց աջակից պիտի գտնուի: Ամօթ է մեզ Հայեր, ձգենք մեր վիզն անցնող յետադիմութեան վշտալի

լուծը : Կարճենք մամուլը , որ մեր յառաջագիտութեան առաջին դարձման է , բանաճառ մեր մտաց դռները արթուն հսկենք . ու գրիչնիս իբր արդարութեան եւ վրէժխնդրութեան սուր մը մեր հայրենի տան Կայտնի եւ անյայտ թշնամոյն դէմ շողացնենք :

Բարեկամ ոյսօր այսչափս բաւական համարելով ձեր Էրիզան կը շնորհաւորեմ , եւ անհամբեր կապսեմ հանդիսիդ առաջին թիւը կողմս սրանալու . որով պատրաստութեամբ , երբեմնակի ձեր ազգըզուտ էջերը պատուելու ջանասէր գտնուիմ :

Բարեկամ

ՎԱԷ

Փ Ո Ւ Ն Ձ

Երբ երկար հեռաւորութենէ մը վերջը՝ մէկը իւր սրտին թռչնիլը , անորին սիրուհին տեսնէ , թէն պաղած ալ ըլլայ , սէրը կը սկսի սաստկանալ . վասն զի սէրը միշտ տարապայման կը մնայ :

— Հեռաւորութիւնը միշտ այն սէրը կը բազմապատկէ՝ երբ կատարեալ է . ինչպէս որ փիլիսոփայութիւնն ալ չը պակսեցնէր :

— Կարծատե հեռաւորութիւնը սէրը կը կենդանացնէ , սպիկայն հեռաւորութիւնը կը մահացնէ :

— Սիրելի մը երբ չը տեսնուիր՝ շուտով կը մոռցուի :

— Որչափ քր. երկուսը պոտերու մէջ վստահութիւն եղած ըլլայ , զարձեալ սիրահարը և սիրուհիք պէտք չէ որ շատ ատեն իրարմէ հեռի մնան . այնչափ հեռի գտնուող տեսնուելու է որ օրը քանի անգամ սիրաբորբոք կատարեն :

— Սէրը զօրեղ տէրութիւն մըն է , որ իւր երկիրը կարող է պաշտպանելու . սակայն երբ անկէ հեռի կը թափուի թշնամեաց ոտնակրիս ըլլայ :

— Հեռաւորութիւնը անհաստատ սրտերու զարագլուխն է , աղէկ կընէ մարդս՝ երբ հեռանալու օրէն իւր բարեկամութեան վերջին հրամէշտը կարգալու ըլլայ :

— Դարձիր » Կը գրէ կին մը իւր սիրելւոյն , եթէ կարենայի հեռանալ մը սիրելւոյն ինքն Սրարիչս կը սիրէի :

— Հեռաւորութեամբ միջակ սէրը կ'անհետանայ ու մեծերը կը բազմապատկի , ինչպէս որ հովը ճրագը փրմարէ ու կրակը կը զգաւ :

— Սէրը վիճակէն փայլուն կրակներէն աւելի ևս սոստիկ կը վառի և իւր կատարի անհանձնարով ձգել կ'ուտայ՝ ծաղկահասակ օրիորդիսը հայրենի բնակարանը :

— Երբ վէկը սիրելւոյն սրտէն զրկուի , անօգուտ արգասիքներ կը համարուի կրկին զայն բերնելու աշխատութիւնը . անդառնալի լոյս մըն է այն՝ որ խաւարին մէջ կ'աներևութանայ : Սիրտը հոգւոյն պէս չը կ'առաջադրուի . մարդանոց կարող է իշխել , միակ ինքն չ'որ մեզի կ'իշխէ . կին մը մէտք է Կոթող ըլլայ՝ գուշակի մը

զինքը չեն սիրեր և նախագուշակելու է՝ եթէ կը սիրուի . Թողելու ամօթահարութիւնն է իւր օգտակար փոյթը . կայ Թողութեան մէջ նաև անպիտի մեծ չարիք մը որով պէտք չէ ամենեւին հանդիսատես ըլլալ . պէտք է Թողուլ , այլ հանդիսատես չըլլալ :

— Մարմն երբ կը կախճէ՝ մէկը սիրել , անոր ներկայութիւնն է որ զմեզ կը խաբէ . մերք մէկը իրաւացի սիրէ՝ իւր հեռաւորութեամբն ալ մեզի կը ծանօթանայ :

— Սիրահարեալ մարդը կ'ոչը կը հետևի . ինչպէս ցուլը զօհարարին :

— Անկարելի է սիրահարուի ու միանգամայն գիտնական ըլլալ :

— Որչափ որ մէկը սիրոյ վրայ կը խօսի . անշուշտ է որ կը սիրահարուի , և անկէ յաւելի ևս հեշտութիւն մը չիկայ . և որով մարդու բնական կիրքն է :

— Պէտք է սիրահարեալներու միշտ ներողամիտ գտնուիլ . ինչպէս որ պատուաւորները ստորիններու :

— Սիրահար մը միկնոյն իրին վրայ խօսելէ չձա՝ ճրանար . որով հետև սիրած մարդուն շահը հոն խառնուած կը գտնուի :

— Սիրահարեալը փոքրիկ տղաներու կը նմանին . զանոնք քիչ մը քննանքնելու համար օրօրոցէ մը ի գառ ուրիշ բան պէտք չէ :

— Անոնք որ սիրով կը կեղծաւորին . քր. սիրահարեալ . կը սիրուին՝ այնքանի ևս աւելի անոնցմէ որոնք որ ճշմարիտ սէր մը կը կրեն :

— Պատուաւոր մէկը կրնայ սիրահարուի անմիտի մը պէս . և ոչ թէ ապուշի նման :

— Աւելի գիտնական խորհուրդներն ու գեղեցիկ դասեր սիրահարեալներու երգիչն են :

— Սէրը կարողութիւն չունի , ուրիշի մը սիրահարութիւնն արգիլելու . բայց մի միայն հազիւ թէ կը կարողանայ սիրահարական տիտղոսը անոնց վրայէն առնուլ ,

— Այսպէս սիրահարեալ երկամասրդ մը . մէկուն հիւանդութեան թշնամանէլ է :

— Սիրահարեալ մէկը էակ մ'է , որ կուզէ միշտ աւելի սիրուն երևնալ . չկրնար . և անա ասոր համար է որ գրեթէ շատ սիրահարներ ծաղրելի կըլլան :

— Քծնող կիները քիչ մ'առաջ գիտեն , որ իրենց սիրահարուած են . անոնք որ պահ մը վերջը իրենց փոխի սիրահարութիւն :

— Այն որ աւելի կը շողորբործէ կին մը , անա այն է որ միայն իրեն սիրահար կըրեալ . մարդ մը ուրիշ շատ կիներէ կը սիրահարուի :

— Սէրը արհեստագէտ մըն է . սիրահարն ալ ալ այնպիսի էակ մըն է որ միշտ ածուխի կտոր մը գտնելով կը սեղմէ զայն՝ ընդհանրապէս գրգռանք մէջ , ընելով , «Ահն» ածիկայ սքանչելի գոհութիւնն է :

ՄԱՐԱԳԻՍՏ-ՏԵՐԵՆ

ԽԱՉԻՆԻ Թ. Թ. ԵՐԻՉԱՆ

ՍՏԱԿԵՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿԱՐԳԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Կ. ԱՅՈՒՍ, ՌԵՎՈՒՆ ԶԱՐԵՐ ՇԵՐԻՔ ԿԱՍԱ ԽԱՆ, ԲԻՒ 13